ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«10» փետրվարի 2017 թվականի № 17-Ն

<<ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 75-րդ հոդվածով, 05.04.2013թ. թիվ ՊՎ311 ընդերքօգտագործման պայմանագրի 3.4.2 և 3.4.7 կետերով, հաշվի առնելով վարչական վարույթ իրականացնող Մշտական հանձնաժողովի 07.02.2017թ. նիստի որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մասնակի բավարարել <<Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ>> ՓԲԸ-ի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի <<Վարչական կարգով ստուգման ակտի վերանայման պահանջի մասին>> վարչական բողոքը և չեղյալ ճանաչել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 24.11.2016թ. ստուգման 900003 ակտի 4-րդ կետի առաջին պարբերությունը, անփոփոխ թողնելով նույն կետի 2-րդ պարբերությունում արձանագրվածը, հիմք ընդունելով ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարումը իրեն տրված 05.04.2013թ. թիվ ԼՎ-311 լեռնահատկացման ակտի սահմաններում և ՕՀՊԳ-ի 22.08.2006թ. թիվ 108 որոշմամբ հաստատված հանքաքարի պաշարներում հաշվարկված ուղեկից բաղադրիչների առկայությունը և հաշվի առնելով վարչական վարույթի 07.02.2017թ. նիստի որոշման 2-րդ կետում նշված պահանջների

կատարման վերաբերյալ ընկերության 07.02.2017թ. թիվ Y2017-7 և 08.02.2017թ. Y17-08 գրություններով ստանձնած պարտավորությունների այսուհետ կատարումը:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ